

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳԻՍԻ
ՀԱՄԱՐՅԱՆ

Երաժշտագետ
Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի «Երաժիշտ» ամսագրի
2008-2011 թթ. գլխավոր խմբագիր

Անշուշտ, ուրախալի էին նորությունները, որոնք տեղի ունեցան արվեստի աշխարհում՝ արվեստագետների բեղուն գործունեությամբ լցնելով պարսպան հիշարժան էջերը: 2010 թ. իրադարձություններով հագեցած տարի էր՝ թե՛ քաղաքականության, թե՛ մշակութային ասպարեզներում:

ժազործությունների 1-ին կատարողն եղավ Հասմիկ Լեյլոյանը:

Հ. Լեյլոյանը համերգներ է ունեցել աշխարհի շուրջ 50 երկրում, փարբեր նվագախմբերի հետ, համագործակցել է երաժշտական փարբեր ոճեր ներկայացնող երաժիշտների հետ, ինչպիսիք են՝ Երվանդ Երզնկյանը, Կարեն Դուրգարյանը, Արա Գևորգյանը, Արա Ղազարյանը, Armenoids խումբը, Պեդրո Յուսաշը (փարբեր ազգերի փողային գործիքներ), Նիկոլայ Կալինինը (Մոսկվայի Օսիպովի անվ. ժողովրդական գործիքների նվագախմբի ղեկավար), Ռոնի Բարաբը, Դանիել Դեբերը, Կոնստանտին Մասկովիչը (նախաար), արաբ երգչուհի և կոմպոզիտոր Հիբա Ալ Զավասը, Հուսեյն Սարսաբին և շար ուրիշներ:

Բախտնահարուհու փարբեր ոճերի և ժանրերի կատարումները տեղ են գտել մի շարք չայնասկավառակներում («Չարթոնը», «Սիրտ իմ սասանի», «Վերադարձիր, սիրելիս», «Նուրալգիս» և այլն) և

ՀԱՍՄԻԿ ԼԵՅԼՈՅԱՆ

հայկական քանոնը միջազգային բեմերում

2010 թ. հարուստ ու հագեցած սրեղծագործական տարի եղավ նաև Հասմիկ Լեյլոյանի համար: ՀՀ վաստակավոր արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր, քանոնահարուհի Հ. Լեյլոյանի բազմակողմանի երաժշտական գործունեության շարունակությունը դարձան նոր հյուրախաղերը, չայնագրությունները, ժողովածուների հրատարակությունները և մասնակցությունը Աբու Դաբիի ու Սիրիայի միջազգային երաժշտական փառատոների: Կոմիտասի անվ. ԵՊԿ ուսանելով քանոնի ազգային դպրոցի հիմնադիր, տաղանդավոր քանոնահար և կոմպոզիտոր Արվեստի Վաստակավոր գործիչ Խաչատուր Ավետիսյանի դասարանում՝ նա դարձավ ժողովրդական նվագարանների ամբիոնի 1-ին շրջանավարտը: Դեռևս 1970-ական թվականներից Հ. Լեյլոյանը ծավալել է կատարողական և մանկավարժական եռանդուն գործունեություն, եղել է Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի, սպա՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ-էստրադային նվագախմբի մենակատար:

Նշենք, որ քանոնահարուհին 1974-ին քանոնի կատարողական արվեստի պարսպան մեջ 1-ինն էր, որ հասնում էր 2 քաժնից մենահամերգով՝ ավանդական կողքին ներկայացնելով մի շարք դասական բարդ երկերի մշակումներ և փոխադրումներ, ինչպիսիք են՝ Կ. Սեն-Սանսի «Ինտրոդուկցիա. Rondo capriccioso»-ն, Պ. Մարասարեի «Հարաներս»-ն, Ֆ. Լիստի 2-րդ Ռապսոդիան, Մ. դե Ֆալլայի «Կրակի պար»-ը, Ն. Պազանիևի 24 Կապրիսը և համաշխարհային ճանաչում ունեցող այլ վիրտուոզ սրեղծագործություններ, որոնք մինչև այդ չեն կատարվել քանոնով: Այսպիսով, նմանատիպ սրեղ-

տեսակավառակներում («Վերադարձիր», «Ոսկե հնչյուններ»), որոնք արտացոլում են նրա կատարողական արվեստի յուրահարույկ կողմերը: Այսպես, «Նուրալգիս» կրկնակի չայնասկավառակում ներկայացված են Հ. Լեյլոյանի փարբեր փարիների համերգային կատարումների թվայնացված չայնագրությունները, որոնք ՀՀ պետական ռադիոյի պահոցում են: Չայնասկավառակներից մեկում արևմտաեվրոպացի կոմպոզիտորների դասական սրեղծագործությունների անզուգական կատարումներ են (Ի. Ալբերտի «Լեգենդը», Ն. Պազանիևի «Վենետիկյան կառնավալը», Պ. Մարասարեի «Գնչուական մեղեդիներ»-ը, Ֆ. Շոպենի 7-րդ Վալսը և այլն), իսկ 2-րդը կազմված է հայ կոմպոզիտորների և հայկական ժողովրդական երկերի հեռուստատեսային համերգների կատարումներից:

Նշանակալից են վերջին 2 նոր «Աշխարհի շուրջ» և «Կողմ» չայնասկավառակները, որոնք փարբերվում են նաև յուրահարույկ ձևավորմամբ: «Աշխարհի շուրջ» չայնասկավառակը ներկայացնում է հայ և փարբեր ազգերի դասական և ազգային երաժշտությունը՝ կատարողական նոր մեկնաբանումներով:

«Կողմ» չայնասկավառակում հայկական երաժշտության հեղափոխական նմուշներ են՝ նոր ռիթմերով, ավելի ժամանակակից մատրցեմամբ և ընկալելի թե՛ հայերի, թե՛ այլազգի ունկնդիրների համար:

Յուրաքանչյուր չայնասկավառակում նա ներկայացնում է նոր խոսքով, նորովի մոտեցմամբ՝ նոր շունչ հաղորդելով կատարվող սրեղծագործություններին:

ԳՐԹՈՒՆԵՌԹՅՈՒՆ-ՊԻՏՄԱՆԿԱՐ

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 1-2(40-41)2011

Հ. Լեյրոյանը հեղինակ է քանոնի արտահայտչական ու տեխնիկական հնարավորություններն ընդլայնող ու զարգացնող բազմաթիվ շեռնարկների, ժողովածուների, մշակումների և փոխադրումների: Նրա «Ընտիր երկեր» ժողովածուն ընդգրկում է Կ. Սեն-Սանսի, Ն. Պազանիևի, Ֆ. Շոպենի, Ի. Ալբենիսի, Մ. Օ. Դյուրանի, Շ. Գունոյի, Ֆ. Լիստի և արևմտաեվրոպացի այլ կոմպոզիտորների սրեղծագործությունների փոխադրումները և մշակումները քանոնի համար: Դասական երաժշտության կատարման խնդիրները հաղթահարելու միջոցները տեղ են գտել «Գամմա, արպեջջո, վարժություններ և էտյուդներ» քանոնի տեխնիկայի զարգացման դասագրքում, որտեղ ներկայացված են կատարման նոր ձևեր, տեխնիկայի զարգացման նոր միջոցներ:

Հ. Լեյրոյանը հանրապետությունում և արտերկրում բազմիցս անցկացրել է վարպետության դասեր, որոնք կարծես հիմք դարձան սրեղծելու «Քանոնի հայկական դպրոց» (2010 թ.) երկմաս դասագիրքը ուսուցիչների և աշակերտների համար: Այն ընդգրկում է երաժշտական դպրոցի 1-6-րդ դասարանների և քոլեջի քանոնի ուսումնական ծրագրերը: «Համերգային ստեղծագործություններ քանոնի համար» ժողովածուն (2010թ.) ներկայացնում է հայկական և արտերկրների կոմպոզիտորների սրեղծագործությունների նոր փոխադրումներ:

Հ. Լեյրոյանի փոխադրումներն ու մշակումները վաղուց արդեն կայուն տեղ են գրավում քանոնահարների նվագախմբում, իսկ նրա կատարողական նոր ձևերի սրեղծման և կիրառման շնորհիվ սրեղծվել են տարբեր սրեղծագործողների նոր երկեր:

2010 թ. մարտի 26-ին, միջազգային փառապանծանության և մրցույթների դափնեկիր քանոնահարուհին Հայաստանի Ազգային երաժշտական մրցանակաբաշխությանն արժանացավ «Հարույն մրցանակի»՝ արտերկրում ազգային երաժշտությունը բարձր մակարդակով ներկայացնելու համար: Մրցանակաբաշխությունից մի քանի օր անց, արաբ երաժիշտ Հոդա Ալ Քավասի հրավերով Հ. Լեյրոյանը մեկնեց Աբու Դաբի՝ մասնակցելու միջազգային երաժշտական փառապանծանության:

Գեղեցիկ ու հպարտության երևույթ դարձավ Հ. Լեյրոյանի մասնակցությունը միջազգային փառապանծանության, որոնցից մեկն անցկացվեց զարնանը, մյուսը՝ աշնանը: Աբու Դաբիի փառապանծանության յուրօրինակ երաժշտական տոն էր ԱՄԷ մշակութային կյանքում, թե՛ տեղացիների, թե՛ պարավաճող հյուրերի համար: Արևելյան շքեղ քաղաքի հյուրընկալ երկրների ներքո միավորվել էին աշխարհի բազմաթիվ գործիքները՝ սրեղծելով արևելյան և արևմտյան երաժշտության գունեղ սիմֆոնիա: Ֆ. Շոպենի ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված Աբու Դաբիի համաշխարհային երաժշտության փառապանծանության 200-ամյա հոբելյանին նվիրված Աբու Դաբիի համաշխարհային երաժշտության փառապանծանության շրջանակներում «Էմիրաթ» պալատում մեկնական համերգային օրեր էին հարկացվել աշխարհի ամենապարբեր ծայրերից հրավիրված երաժիշտներին, որոնք փառապանծանության վերածեցին երաժշտական պանծանքի տոնի: Ելույթ ունեցան Լոնդոնի սիմ-

ֆոնիկ նվագախումբը՝ երիտասարդ դիրիժոր Քրիստիան Ջերվիլի ղեկավարությամբ, Նյու-Յորքի «Մեթրոփոլիթեն» օպերային քարտուկի նվագախումբը, Ռուսաստանից «Մեծ քարտուկի» և Մարիինյան քարտուկի բալետի մենասարողներ, Ամերիկայից «Իլ Դիվո» վոկալ քառյակը, հայերի ջազ շեփոխահար Ուիլբրն Մարտալիսը, դաշնակահար Վալեն Մարշալը, Իրախայից, Ճապոնիայից, Չինաստանից, Եգիպտոսից կատարողներ, փառապանծանության հարույն հյուրն էր լեհ մեծանուն կոմպոզիտոր, դիրիժոր Զիչկո Պենդերեցկին, որը ղեկավարում էր Լեհաստանի ռադիոյի ազգային սիմֆոնիկ նվագախումբը: Օպերայի և բալետի, սիմֆոնիկ և կամերային երաժշտության հետ հնչեց հայկական հրաշալի նվագախումբը՝ քանոնը:

Մեր երկիրը ՀՀ Արտակարգ և լիազոր Դեսպան ԱՄԷ-ում Վահագն Մելիքյանի ներկայությամբ և ՀՀ դրոշի ներքո ներկայացրեց Հասմիկ Լեյրոյանը (նվագակցում էր Երևանից «Կամերային» կամերային անսամբլը, Լիաննա Խանդկարյանի ղեկավարությամբ): Նրա հրաշալի կատարումները՝ յուրահարույն տեխնիկայով, հեղափոխական երաժշտական մեկնաբանմամբ, ինչպես նաև բազմազան ծրագրով, ոչ միայն չզիջեց միջազգային հեղինակություն վայելող երաժիշտներին, այլև հիանալի փառապանծանության թողնելով՝ հարույն մեղայի արժանացրեց քանոնահարուհուն փառապանծանության կազմակերպիչներ ու հովանավորներ շեյխի և նրա տիկնոջ՝ Հոդա Ալ Քավասի կողմից:

Փառապանծանության հետ, Հ. Լեյրոյանի հետ առիթ ունեցանք զրուցելու՝ արտիստուհու կատարողական սկզբունքները ճանաչելու և որպես երաժիշտ նրա անհատականության առանձնահատուկ գծերը բացահայտելու փորձով:

Տիկին Լեյրոյան, ինչպե՞ս սրացվեց մասնակցությունը փառապանծանության և ի՞նչ զգացողություններ ունեցաք այնտեղ որպես կատարող և մասնավորապես՝ ազգային նվագախումբում երաժշտությունը ներկայացնող կատարող:

Աբու Դաբիի փառապանծանության մասնակցեցի միջազգային երաժշտական հիմնադրամի հրավերով, որի ղեկավարն է Բեյրութից օպերային երգչուհի և կոմպոզիտոր Հիբա Ալ Քավասը և նրանց հետ արաբական երկրներում և Եվրոպայում հետագա համերգների պայմանավորվածություն ունենալով: Նշեմ, որ այս շքեղ քաղաքում մեծ հարգանքով և խոնարհումով էին ընդունում երաժիշտներին և շատ հաճելի էր նման վերաբերմունքը: Համաշխարհային երաժշտության մեծությունների կողքին հանդես գալը և հայկական քանոնը ներկայացնելը մեծ պատիվ էր և անշուշտ՝ հնարավորություն ապագայում ավելի մեծ բեմերում ներկայացնելու այն: Ուրախալի էր գիտակցել, որ ճիշտ ուղու վրա եմ:

Տիկին Լեյրոյան, փառապանծանության համերգային ծրագիրը կազմված էր Ն. Պազանիևի, Մ. Օ. Դյուրանի, Ֆ. Շոպենի, Յ. Բրամսի, Ֆ. Կրայսլերի, Շ. Գունոյի, Ջ. Գերշվիլի, Ս. Ջովիլի, Ա. Խաչատրյանի, Ա. Սպենդիարյանի, Ա. Մանդակունյանի սրեղծագործություններից և հայկական ժողովրդական

Կատարողական արվեստ

երգերի փոխադրումներից: Ինչպե՞ս է ընդունվում ազգային նվագարանի նման ակնուվոր երկացանկը և փարիների ընթացքում ինչպե՞ս եկաք այդ նորամուծությանը:

Համերգային ծրագիրը կազմում են և ներկայացնում այնպես, որ ազգային և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները ոչնչով չզիջեն համաշխարհային ճանաչված դասական կոմպոզիտորների ստեղծագործություններին: Կարծում են կարևոր է ծրագրի ճիշտ կազմելը և ներկայացնելը օտար ազգերին: Իմ կատարողական սկզբունքը ցանկացած ժանրի կամ ոճի նյութին հավասարապես բժախնդի որ մասնագիտորեն վերաբերվելն է. ժողովրդականին մոտենում են դասականին հավասար, դասում դասականի կողքին և նույնպիսին էլ լինում է ունկնդրի արձագանքը: Ինչ վերաբերում է նորամուծություններին, ասեմ, որ անցյալում քանոնի նվագացանկը խիստ սահմանափակ էր, ինչը խոչընդոտներ էր առաջացնում գործիքի հնարավորությունների բացահայտմանը: Միգուցե դա էր պատճառը, որ դեռ դպրոցում, այնուհետև ուսումնարանում ուսանելու տարիներից (1970-ականներից) սկսեցի կատարել փոխադրումներ և մշակումներ քանոնի համար՝ սկզբում եղբորս Արտաշես Լեյլոյանի օգնությամբ, հետագայում արդեն ինքնուրույն՝ հայկական երկերին գուգահեռ անդրադառնալով համաշխարհային դասական ստեղծագործություններին: Քանոնի համար փոխադրելով Ի. Ալբերտի Պրելյուդը, կիրառեցի 6, 7 հնչյուններից կազմված ակկորդներ և երկու ձեռքի միաժամանակյա ու հավասար նվագ, որը կարող է փոխարինել դաշնամուրային նվագակցությանը և հնարավորություն է տալիս կատարել ավելի բարդ ու բազմազան երաժշտություն: Ավելացան պիցցոկատոները, որոնք մինչ այդ չէին արվում, 3, նաև 4 ձայնով տրեմոլոները, Պ. Մարասատեի «Գնչուական մեղեդիներ»-ում և Մոնտիի «Չարդաշ»-ում կիրառեցի ֆլաժոլետներ և շատ այլ կատարողական նոր ձևեր (որոնք գետեղվել են «Գամմա, արպեջո, վարժություններ և էտյուդներ» տեխնիկայի զարգացման դասագրքում):

Աբու Դաբիի փառապոստից հեյրո, մայիսի 28-ին, Արա Գևորգյանի հեյր համերգ է ունեցել Մոսկվայի Կրեմլի պալատի դահլիճում՝ ներկայացնելով նրա սրեղծագործությունները: Համերգին նրանք ելույթ ունեցան Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի հեյր, Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ, մասնակցում էին նաև Պեդրո Յուսթաշը, Կոնստանդին Մուկովիչը, Ռոնի Բարաքը և այլ նշանավոր երաժիշկներ: Մեկտեղեցիք 2-ին, նույն կազմով նմանապիսի համերգ րեդի ունեցավ Ղարաբաղում, նվիրված անկախության օրվան, փարբեր երկրներից ժամանած կատարողների մասնակցությամբ (այս անգամ՝ Հայաստանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի հեյր): Ա. Գևորգյանի և Կ. Դուրգարյանի հեյր նշանակալի համերգներ կայացան նաև նոյեմբերի 21-ին և 22-ին, Կիպրոսում, Նիկոսիայի սիմֆոնիկ նվագախմբի հեյր: Համերգին ներկա էին Կիպրոսի Նախագահը, ինչպես նաև փարբեր ղեկավարների ներկայա-

ցուցիչներ և կիպրահայեր:

Մեկտեղեցիք 27-ից հոկտեմբերի 7-ը Սիրիայում անցկացվեց «Մեդաքսե Գանապարհ» («Silk Road») միջազգային երաժշտական փառապոստի, որի շրջանակներում քանոնահարուստ էլույթ ունեցավ երկու համերգով, սեպտեմբերի 28-ին՝ Հալեպում և հոկտեմբերի 1-ին՝ Դամասկոսում, սրբանշանի հարուստ մրցանակ և դիպլոմ: Շքեղությամբ և բազմազանությամբ այս փառապոստը չէր զիջում Աբու Դաբիի փառապոստին:

Ինչպես պարմեց Հ. Լեյլոյանը.

Փառատոնի աշխարհագրական շրջանակը լայն էր, կային մասնակիցներ Եվրոպայից, Ասիայից, Աֆրիկայից, Հայաստանը մասնակցում էր 1-ին անգամ: Փառատոնը կազմակերպել էին Սիրիայի վարչապետը և տուրիզմի նախարարությունը, ի դեպ, հետաքրքրական փաստ է, որ նախարարն անցյալում քանոն է նվագել և այս առումով, հատկանշական է նրա ուշադրությունը ազգային նվագարանների և առհասարակ, երաժշտության հանդեպ: Նա լսել էր իմ կատարումը Աբու Դաբիում և հատուկ հրավիրեց մասնակցելու այս փառատոնին: Իսկ փառատոնի տնօրենն էր ուղահար Հուսեյն Մաբսաբին:

Ի տարբերություն նախորդ փառատոնի, այս անգամ բոլորովին այլ էին պահանջներն ու ծրագիրը: Ես պետք է կատարեի մեծանվագներ, ազգային և առավելապես արևելյան ստեղծագործություններ, ինձ նվագակցելու էին այլազգի ժողովրդական գործիքներ կատարողներ՝ Նասիր Սալամեհ (հարվածային գործիքներ, Հորդանան և Պրոդիֆո Լահիրին (հարվածային գործիքներ, Հնդկաստան):

Կատարեցի Մայթ-Նովայի «Էլիսեմեդ»-ը և Ծ. Համբարձումյանի «Արևելյան պար»-ը, Ս. Ալբունյանի «Շուրջպարը» և իմ իմպրովիզացիաներից: Համերգի եզրափակիչ մասի գագաթնակետն էր՝ Սիրիայից, Չինաստանից, Իսպանիայից, Ֆրանսիայից, Մարոկկոյից, Եմենից, Քաթարից, Թունիսից, Իրանից, Հնդկաստանից, Թուրքիայից, Հորդանանից, ԱՄԷ-ից 17 երաժիշտ միաժամանակ կատարեցինք արաբական մի ստեղծագործություն: Կատարողներից յուրաքանչյուրը փորձում էր իր ազգային գործիքով յուրովի ներկայացնել այդ երաժշտությունը. իրոք շատ հետաքրքիր, տարբեր ազգերի երկխոսություն էր արվեստի, երաժշտության միջոցով:

Անշուշր, հասարակագիտ. սրեղծագործական կատար:

Իհարկե, համագործակցության ծրագրեր կան Չինաստանի և Իրանի հետ, իսկ արաբական երկրների հետ համագործակցությունը ավելի վաղ է սկսվել, և այս փառատոններից հետո էլ վարպետության դասեր անցկացնելու հրավերներ կան ՀՀԿ ֆոնդի, ինչպես նաև առանձին երաժիշտների կողմից:

Արաբական երկրներում նույնպես փարաժում ունի քանոնը: Ինչո՞վ է փարբերվում այն մեր ազգային գործիքից:

Քանոնը տարածված է և՛ Իրանում, և՛ Թուրքիայում, և՛ արաբական երկրներում: Նշված երկրներում նույնն է քանոնի տեսքը և դիապազոնը, տարբեր են լարվածքն ու կատարման ձևերը: Իհարկե այդ եր-



Ռոնի Բարաբ (Լիբանան),
 Հասմիկ Լեյրոյան (Հայաստան),
 Պեդրո Յուսթաշ (Վենեսուելա),
 Կոնստանդին Մասկովիչ
 (Մոլդովա),
 Կիրիլ Պոզնոմոխով (Ռուսաստան),
 Մոսկվա, Կրեմլի դահլիճ, 2010 թ.



Քեյվան Սաքեռ (Իրան), Հասան Ֆալիի (ՍԱԷ, Դուբայ), Հասմիկ Լեյրոյան (Հայաստան), վԱրնար Չակոբարթի
 (Հնդկաստան՝ Մումբայ), Աբուդ Խավաջա (Յեմենի Արաբական Հանրապետություն), Ֆադլա Ալ-Մալքի (Մարոկկո)
 Ջուլիերնո Ջուլիեն (Ֆրանսիա), Փրոդիֆո Լահիրի (Հնդկաստան), Նասեր Սալամենի (Հորդանան)
 «Silk Road» փառատոն, Սիրիա, 2010 թ.

Երաժշտական ՀԱՅՄԱՍՏԱՆ 1-2(40-41)2011



Հասմիկ Լեյրոյան (Հայաստան),
 նախագահ՝ մրցանակի հանձնում
 «Silk Road» փառատոնում, (Սիրիա), 2010 թ.



Ռոսիո Մարքեզ (Իսպանիա), Սեն Լի (Չինաստան),
 Մա Քիստ Հուի (Չինաստան),
 Հասմիկ Լեյրոյան (Հայաստան)
 «Silk Road» փառատոն, Սիրիա, 2010 թ.



Հիբա Ալ-Քավաս Հասմիկ Լեյոյան, Հոդա Ալ-Քամիս և ՀՀ Արտակարգ լիազոր Դեսպան Վահագն Մելիքյան ԱՄԷ-ում ապրիլ 2010 թ.

կրրներում նույնպես կան հիանալի քանոնահարներ՝ պարզապես ավելի նեղ՝ այսինքն, առավելապես ազգային նվագացանկով:

Ինչպիսի՞ն էք պարկերացնում հայկական քանոնի ապագան և ինչպիսի՞ն կուզենալիք, որ լիներ:

Կուզենալի, որ հայկական քանոնը ապրի դարերդար և հետաքրքրի հաջորդ սերունդներին: Դրա համար պետք է գործիքը զարգացնել ժամանակին համապատասխան և համահունչ, հաղթահարել տեխնիկական խոչընդոտները, ստեղծել նոր հնարավորություններ, վերացնել նվագացանկի ազգային և ժանրային սահմանափակումները և որպեսզի լինի լիարժեք տիրապետում կատարողների կողմից. այսպես, մեր սիրելի ազգային գործիքը կպահպանի իր առանձնահատկությունը:

Գտնում եմ, որ ամեն ինչում չափից դուրս պահպանողականությունը հանգեցնում է լճացման: Դրա համար պահպանելուց բացի պետք է առաջ նայել և զգալ ժամանակի պահանջները, կյանքի փոփոխությունները: Չէ՞ որ մեր նպատակն է ազգը ներկայացնել համաշխարհային գնահատանքին և ճանաչմանը արժանի արվեստով: Նկատել եմ, որ հայ կատարողների յուրահատկություններից մեկն էլ այն է, որ կարողանում ենք զգալ և հասկանալ տարբեր ազգերի արվեստի ոճը և մատուցել այն կատարողական բարձր մակարդակով:

Ի վերջո, աշխարհում, ամենից շատ, արվեստում, երաժշտության, թե այլ ասպարեզում, գնահատվում է որակական բարձր աստիճանը, ճաշակը և պրոֆեսիոնալիզմը, որը պարտադիր է բոլոր ազգերի երաժիշտ կատարողների համար:

Մի փաստ ևս, դեռ 1980-ական թվականներից ես հաճախ խոսում եմ նոր քանոնի մասին և անվանում եմ XXI դարի քանոն, որի առանձնահատկությունը գործիքի խրոմատիկ դասավորությունն է (առանց կիսատոներ ստացող բռնակների), մասշտաբների մեծացումը և բնականաբար, դրա անդրադարձը հնչյունարտաբերմանը: Գործիքի նման փոփոխություններն ու բարենորոգումները կարողանում եմ իրագործել քանոն պատրաստող հիանալի վարպետ Ապրես Վանոյանի շնորհիվ, որի դերը հատկապես կուզենալի շեշտել, քանի որ առանց վարպետի աշխատանքի հնարավոր չէր իրագործել մտահղացումներս:

Կարծում եմ, արվեստագետի պարտավորությունն է վերցնել անցյալ սերունդներից մեզ թողած ժառանգությունը, ավելացնել ժամանակի շունչը և փոխանցել հաջորդ սերունդներին, որպեսզի չկորչի դարերից եկող մեր արվեստը, այլ զարգանա և ապրի դարեր դար:

Մեծ է փառանդավոր քանոնահարուհու ավանդը հայկական ազգային նվագարանի փարածման, պահպանման և դասավանդման գործում:

Հասմիկ Լեյոյանի նորանոր նվաճումները հայրենական և միջազգային բեմերում ուրախալի են և սպասված:

(տե՛ս կազմին Հասմիկ Լեյոյանի նոր CD-ների շնորհանդեսի Պատարա, The 21st Bahrain International MUSIC FESTIVAL, 2012 թ.)

Резюме

Summary

Статья музыковеда, главного редактора (с 2008 по 2011) газеты Ереванской государственной консерватории им. Комитаса “Еражишт” Асмик Саркисовны Гамбарян “Асмик Лейлоян: армянский канон на международных сценах” - *интервью-портрет* канонистки, заслуженной артистки РА, лауреата международных конкурсов, профессора Ереванской государственной консерватории им. Комитаса Асмик Араратовны Лейлоян. Автор дает панораму ее многогранной деятельности, включающей исполнительскую, педагогическую и творческую (обработки и переложения для канона произведений зарубежных и армянских композиторов-классиков). В концертных программах знаменитой канонистки звучат произведения таких композиторов, как И. Альбенис, Н. Паганини, П. Сарасате, Ф. Шопен, Ш. Гуно, Ф. Лист, А. Хачатурян, А. Спендиарян, А. Мандакунян, Х. Аветисян, С. Алтуняна и других в переложении А. А. Лейлоян.

А. А. Лейлоян многократно выступала на международных фестивалях, представляя армянский струнный щипковый инструмент канон, который сама в течение многих десятилетий совершенствует технически, что позволяет исполнять переложения сложнейших произведений мировой классики.

Асмик Лейлоян выступала с концертами в 50 странах мира, в том числе, многократно в странах Европы, Азии, Северной и Южной Америки с такими музыкантами, как Ерванд Ерзнкян, Карен Дургарян, Ара Геворкян, Ара Казарян, Педро Юсташ, Николай Калинин, Рони Барак, Даниэл Декер, Константин Маскович, арабская композитор и певица Хиба Ал Кавас, Хусейн Сабсаби и другие. В 2010 году она выступала на фестивале “Silk Road” в Сирии и в Абу Даби, на фестивале, посвященном 200-летию Ф. Шопена.

Талантливой канонисткой выпущены многочисленные лазерные аудио- (“Zartok”, “Come Back Darling”, “Fly My Heart”, “Around The World”, “Collag” “Nostalgia”) и видео- CD (“Golden Strings”, “Come Back”), выполненные на высоком профессиональном уровне.

А. Лейлоян автор книг и нотных изданий: “Избранные сочинения” (переложения и обработки для канона); “Армянская школа канона” 1 и 2 части; “Концертные сочинения для канона”; Учебник для развития техники “Гаммы, арпеджио, упражнения и этюды” для канона.

The article “Hasmik Leyloyan: Armenian Qanon on international stages” of musicologist, editor in chief of newspaper “Erazhisht” (from 2008 to 2011) of Yerevan State Conservatory after Komitas Hasmik S. Hambaryan is an *interview portrait* of qanonist, Meritorius Artist of RA, Lauriate of international competition, professor of Yerevan State Conservatory after Komitas Hasmik A. Leyloyan.

The name of the deserved artist of RA, professor of Yerevan State Conservatory after Komitas, laureate of international competitions, Qanon player Hasmik Leyloyan is already known to a wide range of audience. She has deserved the love and respect of admirers of Armenian folk music.

The famous Qanon player Hasmik Leyloyan is considered the innovator of classical school of Armenian Qanon, not only for her new performing styles, but also for bringing in two-part concerts (in 1974 her first recital), by bril-

liantly performing her exclusive improvisations and instrumentations: Sarasate - “Gypsy Tunes”, “Khabanera”, Chopin - “Waltz N7”, Liszt - “Hungarian Rhapsody” N2, Albeniz - “Prelude”, Paganini - “24 Capris”, Saint-Saens - “The Introduction and Rondo Capriccioso” and many others, which in a new way represent wide abilities of Qanon. The well-experienced artist perfectly possesses both the virtuoso and expressive techniques of the instrument and demonstrates unique performance of both national and classical difficult compositions. This is the reason she is considered the “Queen” of Qanon.

She was born in Yerevan. In 1981 she graduated from Yerevan State Conservatory, being the student of composer professor Khachatur Avetisyan. Hasmik Leyloyan is the first graduate of the Chair of National Instruments. Having graduated from the Conservatory, she immediately began working as in instructor in the Chair of National Instruments of the same institution.

Since 1970ies, Hasmik Leyloyan has undertaken a wide range of concert and teaching activities. For many years she has been the soloist of the Armenian State Symphony, and then of the Symphony and Pop Orchestra of the Armenian Radio. She has performed with different symphony orchestras: orchestras of Montreal, Toronto, Marcel, Sydney, Beirut, New York, and National Instruments Orchestra after Osipov of Moscow. She is co-working with various musicians: Ara Gevorgyan, Karen Durgaryan, Yervand Yerznkyan, Daniel Decker, Pedro Eustache, Hiba Al Qawas, Rony Barrak, Konstantin Moskovich and many others.

Hasmik Leyloyan has given concerts in more than 50 countries of the world. She has many radio and TV recordings, included in the state funds as well as a number of compact laser disks (“Zartok”, “Come Back Darling”, “Fly My Heart”, “Around The World”, “Collag” “Nostalgia”) and video recordings (“Golden Strings”, “Come Back”).

Hasmik Leyloyan is an author of many books and collections for Qanon, which are already included in the repertoires of many Qanon players: “Selected Works”, “Treatments for Qanon”, “Concert Compositions for Qanon”, “Gamma-Arpeggio Exercises and Etudes” manual for performing technique development for Qanon, “Armenian School of Qanon” two-volume textbook, where are also included the first steps for teaching Qanon.

Hasmik Leyloyan is actively continuing her different activities, is instructing in the Conservatory and is conducting master classes for teachers and pupils of different institutions of the country, by helping them to understand the performing secrets of the ancient instrument. Being a skilled pedagogue, she has educated many pupils not only from different regions of RA, but also from other countries around the world. Since 80ies Hasmik Leyloyan is trying to create a new Qanon, which tunes will be chromatic. The handles (by means of which semitones are received) that affect the freely mastering of Qanon's technique will be removed. This idea is already coming to life and the first instruments are already being made by great master of Qanon Apres Vanoyan and will gradually enter musical sphere.

Invaluable is her work done towards the development and teaching of the instrument, as well as towards spreading and maintaining it.